

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

8 մայիսի, 2020 N 14

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ուժը կորցրած է ճանաչվել ԱՀ Պարետի 2020 թվականի մայիսի 12-ի N 16 որոշմամբ)

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **ո Ր Ո Ղ ՈՒ Մ Ե Մ**.

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Բրաջուր համայնքում (այսուհետ՝ Նոր Բրաջուր համայնք) կիրառել հետևյալ սահմանափակումները.

1) Սահմանել Նոր Բրաջուր համայնքի վարչական սահմաններ մուտք գործելու և ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման նպատակով անձանց տեղաշարժի և Քարվաճառ-Նոր Բրաջուր-Մարտակերտ ավտոճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության.

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված Նոր Բրաջուր համայնքի վարչական սահմաններ մուտք գործելու սահմանափակման համար բացառություն սահմանել մինչև 2020 թվականի մայիսի 9-ը՝ ժամը 12:00-ն՝ թույլատրելով Նոր Բրաջուր համայնքում մշտական բնակության իրավունք ունեցող կամ փաստացի բնակվող անձանց մուտքը.

3) Հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու նպատակով ԱՀ ոստիկանության և ԱՀ ազգային անվտանգության ծառայության կողմից սահմանված վայրերում տեղադրել հատուկ անցակետեր՝ անձանց ու տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու նպատակով.

4) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված՝ Քարվաճառ-Նոր Բրաջուր-Մարտակերտ ավտոճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության վերահսկման նպատակով ԱՀ ոստիկանության կողմից Նոր Բրաջուր համայնքի ներսում սահմանել վերակարգեր և բացառել երթևեկող տրանսպորտային միջոցների կանգ առնելը Նոր Բրաջուր համայնքի վարչական սահմաններում:

2. ԱՀ ոստիկանության պետին և ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

3. ԱՀ ոստիկանության պետին՝ երկօրյա պարբերականությամբ Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

4. ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարին, Նոր Բրաջուր համայնքի ղեկավարին՝ օժանդակել ԱՀ ոստիկանության և ԱՀ ազգային անվտանգության ծառայության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 8-ին՝ ժամը 20:00-ին:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ